

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 2 (80)

2018 թ.

Գլխավոր խմբագիր՝
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
ի.գ.դ., պրոֆ. Գագիկ Ղազինյան

Խ մ ք ա գ ր ա կ ա ն խ ո թ Ի ու ը ղ

Սամվել Դիլբանդյան - ի.գ.դ.

Գլխավոր խմբագրի տեղակալ

Կարեն Գևորգյան - ի.գ.թ

Գլխավոր խմբագրի տեղակալ

Աշոտ Պետրոսյան -

պատասխանատու քարտուղար

Գևորգ Դանիելյան - ի.գ.դ.

Հարություն Խաչիկյան - ի.գ.դ.

Արմեն Հայկյանց - ի.գ.դ.

Ղավիթ Ավետիսյան - ի.գ.թ.

Արթուր Վաղարշյան - ի.գ.դ.

Սերգեյ Առաքելյան - ի.գ.դ.

Վահե Հովհաննիսյան - ի.գ.դ.

Տարոն Սիմոնյան - ի.գ.թ.

Հիմնադիր և հրատարակիչ՝
ՀՀ իրավաբանների միություն,
ԵՊՀ իրավագիտության
ֆակուլտետ

Խմբագրության հասցեն՝

ՀՀ, 0025 Երևան,

Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ

իրավագիտության ֆակուլտետ:

Հեռ. 060-71-02-47

Էլ. կայք՝

[http://ysu.am/faculties/hy/Law/
section/structure/amb/48439](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb/48439)

Խմբագրությունը կարող է

հրապարակել նյութեր՝ համամիտ

չլինելով հեղինակների

տեսակետների:

12 համակարգչային էջից ավելի

չպատվիրված նյութերը չեն

ընդունվում:

e-mail: a_petrosyan@ysu.am

Դասիչ՝ 77771

Տպագրական 13.5 մամուլ

Գրանցման թիվը՝ 798

Տպաքանակը՝ 500

Գինը՝ պայմանագրային

Հանձնված է շարվածքի

24.06.2018

Հանձնված է տպագրության

5.09.2018

С О Ю З Ю Р И С Т О В Р А
Ю Р И Д И Ч Е С К И Й Ф А К У Л Ъ Т Е Т Е Г У

ГОСУДАРСТВО И ПРАВО

Номер 2 (80)
2018 г.

Главный редактор:
академик НАН РА,
д.ю.н., проф. Гагик Казинян

Учредитель и издатель:
Союз Юристов РА,
Юридический факультет ЕГУ

Редакционный совет

Самвел Дилбандян - д.ю.н.

зам. главного редактора

Карен Геворгян - к.ю.н.

зам. главного редактора

Ашот Петросян -

ответственный секретарь

Геворг Даниелян - д.ю.н.

Арутюн Хачикян - д.ю.н.

Армен Айкянц - д.ю.н.

Давид Аветисян - к.ю.н.

Артур Вагаршян - д.ю.н.

Сергей Аракелян - д.ю.н.

Ваге Оганнесян - д.ю.н.

Тарон Симонян - к.ю.н.

Адрес редакции:
РА, 0025 Ереван,
ул. Алека Манукяна 1,
юридический факультет ЕГУ.
Тел.: 060-71-02-47
e-mail: a_petrosyan@ysu.am
web: [http://ysu.am/faculties/hy/Law/
section/structure/amb/48439](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb/48439)

13.5 усл. печ. л.
Тираж: 500
Сдано в набор 24.06.2018
Подписано к печати 5.09.2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիական իրավունք և դատավարություն

Գրիգոր Բեքմեզյան

ՕՐԵՆՔ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ 5

Վահագն Գրիգորյան

ԳԱՂՏՆԻ ԵՂԱՆԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ, ՏԵՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 12

Աշխեն Սողոմոնյան

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ 23

Նաիրա Ավետիսյան

ԱՆՁԻՆ ԱՆԳՐԾՈՒՄԵՆԱԿ ՃԱՆԱՁԵԼՈՒ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՈՐՈՇ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 31

Ռուբինա Պետրոսյան

ԱՐԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ԵՐԵՄԱՅԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱԿԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐՆ ԸՍՏ ՀՀ ՕՐԵՆՍԱԴՐՈՒԹՅԱՆ 40

Դավիթ Օհանյան

ԿԱՄՔԸ ԵՎ ԿԱՄԱՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ 54

Քրեական իրավունք և դատավարություն

Սամվել Դիլբանդյան

ԱՆՁԱՓԱՀԱՍԻՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ ՀԱՆՑԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ 63

Արտակ Ղազարյան

«ՄԱՍՆԱԿՈՐ ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ԳՈՐԾԵՐԻ» ԵՎ ՏՈՒԺՈՂԻ ՀԵՏ ՀԱՇՏՎԵԼՈՒ ՀԻՄՔՈՎ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՆԱՆԱՏԿՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 73

Геворг Израелян

ПРЕДУПРЕЖДЕНИЕ ПРОСТИТУЦИИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ: ПРАВОВЫЕ ОСНОВЫ И ОРГАНИЗАЦИОННЫЕ ПРОБЛЕМЫ 86

Լալա Գրիգորյան

ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՏԱՐԻՔԻ ԶՀԱՍԱԾ ԿԱՍ
ԱՆՄԵՂՍՈՒՄԻՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԻՃԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՁԻՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ
ՄԻՋՈՑՈՎ ՀԱՆՑԱՆՔ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՇՈՒՋ 93

Միջազգային իրավունք

Anahit Petrosyan

THE LEGALITY OF MUSLIM BAN AND THE PRINCIPLE OF NON-REFOUOLEMENT
OBLIGATION UNDER PUBLIC INTERNATIONAL LAW 101

Պետության և իրավունքի տեսություն

Արեն Տեր-Բալյան

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԼՈՐԱԼԱՑՄԱՆ ՆԵՐԱՌՈՒՄԸ ԳԼՈՐԱԼԱՑՄԱՆ ԻՆԴԵՔՍՆԵՐՈՒՄ.
ՏԵՍԱԿԱՆ-ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿ 108

ԳԱՂՏՆԻ ԵՂԱՆԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ, ՏԵՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Վահագն Գրիգորյան

*ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասիստենտ,
իրավաբանական գիտությունների թեկնածու*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգրք) 57-րդ հոդվածի համաձայն՝ ապացույց է այն փաստական տվյալը, որի հետազոտման և գնահատման հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիմքում դրված, ինչպես նաև գործի կամ հարցի լուծման համար նշանակություն ունեցող այլ փաստերի առկայությունը կամ բացակայությունը:

Ի տարբերություն նախկին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի¹, Օրենսգրքն առավել մանրամասն է կարգավորում քաղաքացիական գործերի քննության ընթացքում լուսանկարները, ձայնագրությունները և տեսագրությունները որպես ապացույց ներկայացնելու, դրանց հետազոտման և թույլատրելիության գնահատման հետ կապված հարցերը:

Այսպես, նախկինում գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածը սահմանում էր, որ լուսանկարները, ձայնագրությունները և տեսագրությունները համարվում են իրեղեն ապացույցներ: Մինչդեռ Օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասը հստակ սահմանում է, որ լուսանկարները, ձայնագրություններն ու տեսագրությունները ապացույցների ինքնուրույն տեսակ են: Նման մոտեցումն արդարացված է՝ հաշվի առնելով լուսանկարների, ձայնագրությունների և տեսագրությունների առանձնահատկությունները:

Ի տարբերություն նախկինի՝ նոր Օրենսգրքը սահմանում է գաղտնի եղանակով կատարված լուսանկարների, ձայնագրությունների և տեսագրությունների թույլատրելիության հատուկ կանոն: Այսպես՝ 83-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, եթե անձի լուսանկարումը կամ նրա ձայնագրումը կամ տեսագրումն իրականացվել է առանց այդ անձի համաձայնության կամ իմացության, ապա ապացույցը թույլատրելի է միայն այն դեպքում, եթե օրենքը դա չի արգելում: Այս կարգավորումը համահունչ է նաև ՀՀ Սահմանադրության² 39-րդ հոդվածով ամրագրված «մարդու ազատ գործելու իրավունքին», այն է՝ մարդն ազատ է անելու այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում Սահմանադրությանը ու օրենքներին:

Բացի այդ, Օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է ապացույցներ

¹ Ընդունվել է 17.06.1998թ., ուժի մեջ է մտել 01.01.1999թ.: Տե՛ս ՀՀՊՏ 1998/20(53), 09.09.1998թ.:

² Ընդունվել է 06.12.2015թ., ուժի մեջ է մտել 22.12.2015: Տե՛ս ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118:

րի թույլատրելիության ընդհանուր կանոն, որը կիրառելի է նաև գաղտնի եղանակով կատարված լուսանկարների, ձայնագրությունների և տեսագրությունների նկատմամբ: Ըստ այդ իրավանորմի՝ հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցի օգտագործումն արգելվում է:

Հետևաբար, գաղտնի եղանակով կատարված կոնկրետ լուսանկարի, ձայնագրության և տեսագրության թույլատրելիությունը պարզելու համար անհրաժեշտ է պատասխանել հետևյալ հարցերին.

1) արդյո՞ք տվյալ պահին և տվյալ իրավիճակում օրենքն ուղղակիորեն արգելում էր գաղտնի եղանակով լուսանկարի, ձայնագրության կամ տեսագրության կատարումը,

2) արդյո՞ք գաղտնի եղանակով լուսանկարի, ձայնագրության կամ տեսագրության կատարումը խախտում էր անձի արդար դատաքննության իրավունքը,

3) արդյո՞ք գաղտնի եղանակով լուսանկարի, ձայնագրության կամ տեսագրության կատարումը խախտում էր անձի հիմնական իրավունքներից որևէ մեկը:

Առաջին հարցի կապակցությամբ պետք է նշել, որ օրինակ՝ «Ջանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածը սահմանում է գաղտնի եղանակով արված տեսագրության տարածումն արգելելու մասնավոր դեպք: *Արգելվում է տեսաձայնագրմամբ ստացված տեղեկատվության տարածումը (մեր կարծիքով՝ «տարածում») է նաև այդ տեսագրությունը դատավարության ընթացքում որպես ապացույց օգտագործելը, եթե դա ստացվել է առանց տեսաձայնագրման կատարման մասին զգուշացնելու, և անձն ակնկալել է, որ գտնվում է տեսաձայնագրումը կատարողի տեսադաշտից դուրս, լսելի չէ նրա համար և դրա համար ձեռնարկել է բավարար միջոցներ, բացառությամբ, երբ տեսաձայնագրումը կատարած անձի տեսադաշտից դուրս լինելու կամ նրա համար լսելի չլինելու համար ձեռնարկված միջոցներն ակնհայտորեն անբավարար են եղել:* Սակայն անգամ այս արգելքը բացարձակ չէ. նույն իրավանորմը սահմանում է նաև, որ այդպիսի տեսաձայնագրմամբ ստացված տեղեկատվության տարածումը թույլատրվում է, եթե դա անհրաժեշտ է հանրային շահերի պաշտպանության համար:

Իհարկե չպետք է մոռանալ նաև, որ «Ջանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածը հստակ սահմանում է, որ օրենքը կարգավորում է միայն **զանգվածային լրատվության իրականացման հետ կապված հարաբերությունները**: Վերը նշված իրավանորմը և արգելքը վերաբերում են միայն զանգվածային լրատվության միջոցներին:

Երկրորդ հարցի կապակցությամբ պետք է նշել, որ, ամեն դեպքում, գաղտնի եղանակով լուսանկարի, ձայնագրության կամ տեսագրության կատարումը չի խախտում անձի արդար դատաքննության իրավունքը¹:

Երրորդ հարցադրման կապակցությամբ պետք է նշել, որ ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք: Սույն աշխատանքում անդրադարձ կկատարվի այն խնդրին, թե *արդյո՞ք գաղտնի եղանակով լուսանկարի կամ տեսագրության կատարումը*

¹ Ավելի մանրամասն տե՛ս **Վ.Հ. Գրիգորյան**, «Գաղտնի եղանակով կատարված ձայնագրությունների և տեսագրությունների թույլատրելիության հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում» // ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատ., 2017, էջեր 399-400:

րունը կարող է խախտել անձի սեփականության իրավունքը, և եթե այդ, ապա ո՞ր դեպքերում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սեփականության իրավունքը սուբյեկտի իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը: Հետևաբար, «սեփականության իրավունք» հասկացությունը ներառում է **գույքի տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավագործությունները**: Այդ հոդվածը սահմանում է նաև «տիրապետման իրավունք», «օգտագործման իրավունք» և «տնօրինման իրավունք» հասկացությունների բովանդակությունը:

Այդ հասկացությունների բովանդակության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ.

- **«Տիրապետման իրավունքը»** գույքը փաստացի տիրապետելու հնարավորությունն է: Իսկ գույքը լուսանկարելը կամ տեսանկարահանելը չի կարող համարվել գույքի տիրապետում: Նման գործողությունը չի կարող համարվել սեփականատիրոջ կողմից իր գույքի տիրապետման իրավունքի խախտում, քանի որ այն որևէ կերպ չի խոչընդոտում սեփականատիրոջ կողմից գույքը փաստացի տիրապետելու հնարավորությունը:

- **«Տնօրինման իրավունքը»** գույքի ձակատագիրը որոշելու հնարավորությունն է: Իսկ գույքը լուսանկարելը կամ տեսանկարահանելը չի կարող համարվել գույքի տնօրինում կամ սեփականատիրոջ կողմից իր գույքի տնօրինման իրավունքի խախտում, քանի որ այն որևէ կերպ չի խոչընդոտում նրա՝ իր գույքի ձակատագիրը որոշելու հնարավորությունը:

«Օգտագործման իրավունքը» գույքից դրա օգտակար բնական հատկությունները քաղելու, ինչպես նաև դրանից օգուտ ստանալու հնարավորությունն է: Անհրաժեշտ է քննարկել այն հարցը, թե *արդյո՞ք գույքը լուսանկարելը կամ տեսանկարահանելը կարող է համարվել այդ գույքի օգտագործում, և արդյո՞ք նման օգտագործման համար անհրաժեշտ է սեփականատիրոջ թույլտվությունը*:

1) Ինչպես արդեն նշվեց, օգտագործման իրավունքը գույքից դրա **օգտակար բնական հատկությունները քաղելու**, ինչպես նաև **դրանից օգուտ ստանալու** հնարավորությունն է: Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ օգուտը կարող է լինել եկամտի, պտուղների, աճի, ծնաճի և այլ ձևերով:

Հետևաբար, **«գույքի օգտագործում» հասկացությունը պետք է մեկնաբանել այդ գույքից որևէ տեսակի եկամուտ կամ օգուտ ստանալու ամրվազն տեսական հնարավորության լույսի ներքո**¹:

Ստացվում է, որ գույքը (ներառյալ՝ անշարժ գույքը) լուսանկարելը կամ տեսանկարահանելն **ինքնին չի կարող համարվել գույքի օգտագործում**, եթե այն որոշակի

¹ Նշված պնդման վրա արված եզրահանգումները սխալ կլինեն այն դեպքում, եթե ՀՀ վճարել դատարանը կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իրենց դատական ակտերում «օգտագործման իրավունք» կամ «գույքի օգտագործում» հասկացությունները մեկնաբանած լինեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքից տարբերվող և ավելի «լայն» եղանակով: Մեր կողմից նման դատական ակտեր չեն հայտնաբերվել, սակայն դրանց գոյությունը կամ հետագայում կայացումը չի բացառվում: Այս կապակցությամբ տե՛ս օրինակ **Monica Carss-Frisk**, "The right to property: A guide to the implementation of Article 1 of Protocol № 1 to the European Convention on Human Rights", Human rights handbooks, № 4, Council of Europe, Germany, 2003, ինչպես նաև **Aida Grgic, Zvonimir Mataga, Matija Longar, Ana Vilfan**, "The right to property under the European Convention on Human Rights: A guide to the implementation of the European Convention on Human Rights and its protocols", Human rights handbooks, № 10, Council of Europe, Belgium, 2007:

օգուտ և/կամ որևէ տեսակի եկամուտ չի բերում (և հետագայում էլ չի բերելու) լուսանկարողին (տեսանկարահանողին): Նշվածի օրինակ է այն դեպքը, երբ գույքը լուսանկարվում կամ տեսանկարահանվում է բացառապես անձնական նպատակներով:

Մյուս կողմից, գույքը (ներառյալ՝ անշարժ գույքը) լուսանկարելը կամ տեսանկարահանելը **կհամարվի գույքի օգտագործում**, եթե այն որոշակի օգուտ և/կամ որևէ տեսակի եկամուտ է բերում (կամ հետագայում է բերելու) լուսանկարողին (տեսանկարահանողին): Նշվածի օրինակ է այն դեպքը, երբ նման լուսանկարը կամ տեսագրությունը հետագայում օգտագործվելու է առևտրային նպատակներով:

Անկողնելով ասվածը՝ կարծում ենք, որ գույքը լուսանկարելը կամ տեսանկարահանելը կարող է համարվել այդ գույքի օգտագործում այն դեպքում, եթե լուսանկարումը կամ տեսանկարահանումը կատարվում է որևէ օգուտ ստանալու (քաղելու) նպատակով կամ ակնկալիքով:

2) Թեև ՀՀ քաղաքացիական օրենսգրքում գոյություն չունի որևէ նորմ, որը հստակ և ուղղակիորեն կսահմաներ, որ **գույքի օգտագործումը կարող է տեղի ունենալ միայն սեփականատիրոջ թույլտվությամբ**, այդուհանդերձ այդ կանոնը բխում է ինչպես սեփականության իրավունքի էությունից, այնպես էլ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի մի շարք նորմերի համադրված վերլուծությունից:

Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը սահմանում են, որ սեփականության իրավունքը սուբյեկտի ... իրավունքն է՝ **իր հայեցողությամբ ... օգտագործելու ...** իրեն պատկանող գույքը: Սեփականատերն իրավունք ունի ... **այլ անձանց ... փոխանցել ... գույքի օգտագործման ... իրավունքները ...:**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 277-րդ հոդվածի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի պահանջել վերացնելու իր իրավունքների ամեն մի խախտում, **թեկուզև այդ խախտումները զուգորդված չեն եղել տիրապետումից զրկելու հետ: Ակնհայտ է, որ այս նորմը վերաբերում է օգտագործման և տնօրինման իրավունքների խախտումներին:**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 606-րդ հոդվածի համաձայն՝ վարձակալության պայմանագրով վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը **և (կամ) օգտագործմանը հանձնել գույք:** Իսկ 685-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գույքի անհատույց օգտագործման պայմանագրով ... մի կողմը ... պարտավորվում է գույքը հանձնել կամ հանձնում է **մյուս կողմի ... անհատույց ժամանակավոր օգտագործմանը**, իսկ վերջինս պարտավորվում է այդ գույքը վերադարձնել նույն վիճակում ... կամ պայմանագրով որոշված վիճակում:

Վերը նշված իրավանորմերի համադրումից բխում է, որ.

ա) սեփականության իրավունքը ներառում է **ոչ միայն գույքը սեփականատիրոջ կողմից իր հայեցողությամբ օգտագործելու իրավունքը**, այլև՝ **գույքը այլ անձանց ապօրինի (առանց սեփականատիրոջ համաձայնության) օգտագործումից պաշտպանելու իրավունքը**,

բ) սեփականատերը իրավունք ունի պահանջել դադարեցնել երրորդ անձանց կողմից իր գույքի ապօրինի (առանց սեփականատիրոջ համաձայնության) օգտագործումը,

գ) սեփականատիրոջը պատկանող գույքի օգտագործումը երրորդ անձանց կողմից կարող է լինել հատուցելի կամ անհատույց, **սակայն ամեն դեպքում՝ սեփա-**

կանատիրոջ համաձայնությամբ (բացառությամբ հարկադիր սերվիտուտի և օրենքով սահմանված այլ դեպքերի, որոնք մեր խնդրին չեն առնչվում):

Անփոփելի ասվածը՝ կարող ենք պնդել, որ սեփականատիրոջ համաձայնությունն անհրաժեշտ է երրորդ անձանց կողմից գույքի նկատմամբ ցանկացած գործողություն կատարելու համար, որը կարող է համարվել այդ գույքի օգտագործում:

Այսպիսով, եթե գույքի լուսանկարումը կամ տեսանկարահանումը կատարվում է օգուտ ստանալու նպատակով կամ ակնկալիքով, ապա դա համարվում է գույքի օգտագործում, որի համար անհրաժեշտ է սեփականատիրոջ թույլտվությունը: Նման թույլտվության բացակայության պայմաններում կատարված գաղտնի լուսանկարը կամ տեսագրությունը խախտում է գույքի սեփականատիրոջ սեփականության իրավունքը:

Մինչդեռ, եթե գույքի լուսանկարումը կամ տեսանկարահանումը կատարվում է բացառապես անձնական նպատակներով, ապա դա չպետք է համարվի գույքի օգտագործում, և հետևաբար դրա համար չպետք է պահանջվի սեփականատիրոջ կողմից տրված թույլտվություն: Նման թույլտվության բացակայության պայմաններում կատարված գաղտնի լուսանկարը կամ տեսագրությունը չպետք է դիտվի որպես գույքի սեփականատիրոջ սեփականության իրավունքի խախտում:

Միևնույն ժամանակ, պետք է հաշվի առնել, որ լուսանկարվող կամ տեսանկարահանվող գույքը կարող է հանդիսանալ ոչ միայն «դասական» սեփականության իրավունքի, այլև մտավոր սեփականության իրավունքի օբյեկտ: ՀՀ սահմանադրության 60-րդ հոդվածի («Սեփականության իրավունքը») 7-րդ մասի համաձայն՝ **մտավոր սեփականությունը պաշտպանվում է օրենքով:** Հետևաբար կարող ենք պնդել, որ «մտավոր սեփականությունը» ևս սեփականության տարատեսակ է:

Ուստի, գույքի լուսանկարման կամ տեսանկարահանման (այդ թվում՝ գաղտնի լուսանկարման կամ տեսանկարահանման) դեպքում պետք է հաշվի առնել նաև **մտավոր սեփականության իրավունքի ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջները**, որովհետև սուբյեկտային առումով մտավոր սեփականության օբյեկտ հանդիսացող գույքի սեփականատերը միշտ չէ, որ մտավոր սեփականության օբյեկտի իրավատեր է համարվում: Օրինակ, «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքը գործում է անկախ այն նյութական օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքից, որում արտահայտված է ստեղծագործությունը: Հեղինակի կողմից նյութական օբյեկտի օտարումը, որում արտահայտված է ստեղծագործությունը, ինքնին չի նշանակում հեղինակային իրավունքի օտարում:

Ընդ որում, մտավոր սեփականության օբյեկտ կարող է հանդիսանալ ոչ միայն շարժական, այլև անշարժ գույքը («Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ մասի «թ» կետի համաձայն՝ հեղինակային իրավունքի օբյեկտներ են նաև **քաղաքաշինական, ճարտարապետական, այգեպուրակային արվեստի ստեղծագործությունները և դրանց լուծումները**):

Հետևաբար, մտավոր սեփականության իրավունքի օբյեկտ հանդիսացող գույքը գաղտնի լուսանկարելու կամ տեսանկարահանելու դեպքում պետք է հաշվի առնել նաև հանգամանքը, թե արդյոք կոնկրետ իրավիճակում և կոնկրետ նպատակի առկայության պայմաններում թույլատրելի է մտավոր սեփականության օբյեկտի լուսանկարումը կամ տեսանկարահանումը՝ առանց մտավոր սեփականության օբյեկտի իրավատիրոջ համաձայնության: Ընդ որում, մտավոր սեփականության օբյեկտ

տի լուսանկարումը կամ տեսանկարահանումը մտավոր սեփականության ոլորտը կարգավորող օրենսդրության տեսանկյունից կարող է համարվել այդ օբյեկտի օգտագործում, իսկ մտավոր սեփականության օբյեկտն առանց իրավատիրոջ թույլտվության օգտագործելու սահմանները կարգավորվում են մտավոր սեփականության ոլորտը կարգավորող օրենսդրությամբ:

Այս կապակցությամբ որպես օրինակ կարելի է նշել, որ «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի համաձայն՝ առանց հեղինակի համաձայնության և հեղինակային վարձատրության վճարման թույլատրվում են փողոցներում, զբոսայգիներում, հրապարակներում և այցելության համար բաց այլ վայրերում մշտապես տեղադրված ստեղծագործությունների՝ ցանկացած կրիչի վրա, ցանկացած միջոցներով և ձևերով վերարտադրումը, հեռարձակումը, վերարտադրված օրինակների տարածումը, այդ թվում՝ համացանցի միջոցով:

Ընդ որում, ինչպես արդեն նշվեց, «ստեղծագործություն» կարող է համարվել ինչպես շարժական, այնպես էլ անշարժ գույքը՝ որպես քաղաքաշինական և/կամ ճարտարապետական ստեղծագործություն: Իսկ լուսանկարումը կամ տեսանկարահանումը վերարտադրման եղանակ է («Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ վերարտադրում է համարվում ստեղծագործության ուղղակի կամ անուղղակի, ժամանակավոր կամ մշտական ամրագրումը ցանկացած կրիչի վրա, ցանկացած միջոցներով և ձևով, ամբողջությամբ կամ մասնակի):

Սակայն պետք է նկատի ունենալ, որ վերը նշված հոդվածը կարգավորում է ոչ թե լուսանկարողների/տեսանկարահանողների և հեղինակային իրավունքի օբյեկտ հանդիսացող գույքի սեփականատիրոջ, այլ բացառապես լուսանկարողների/տեսանկարահանողների և հեղինակային իրավունքի օբյեկտ հանդիսացող գույքի հեղինակի միջև ծագող հարաբերությունները:

Այսպիսով՝

1) Եթե գույքի լուսանկարումը կամ տեսանկարահանումը կատարվում է օգուտ ստանալու նպատակով կամ ակնկալիքով, ապա դա համարվում է գույքի օգտագործում, որի համար անհրաժեշտ է սեփականատիրոջ թույլտվությունը: Նման թույլտվության բացակայության պայմաններում արված գաղտնի լուսանկարը կամ տեսագրությունը խախտում է գույքի սեփականատիրոջ սեփականության իրավունքը:

2) Եթե գույքի լուսանկարումը կամ տեսանկարահանումը կատարվում է բացառապես անձնական նպատակներով, ապա դա չպետք է համարվի գույքի օգտագործում, և դրա համար չպետք է պահանջվի սեփականատիրոջ կողմից տրված թույլտվություն: Նման թույլտվության բացակայության պայմաններում կատարված գաղտնի լուսանկարը կամ տեսագրությունը չպետք է դիտվի որպես գույքի սեփականատիրոջ սեփականության իրավունքի խախտում:

3) Մտավոր սեփականության իրավունքի օբյեկտ հանդիսացող գույքը գաղտնի լուսանկարելու կամ տեսանկարահանելու դեպքում պետք է հաշվի առնել նաև հանգամանքը, թե արդյոք կոնկրետ իրավիճակում և կոնկրետ նպատակի առկայության պայմաններում թույլատրելի է մտավոր սեփականության օբյեկտի լուսանկարումը կամ տեսանկարահանումը՝ առանց մտավոր սեփականության օբյեկտի իրավատիրոջ համաձայնության:

Ընդ որում, կարծում ենք, որ, ընդհանուր առմամբ, վերը նշված երեք պնդումները վերաբերում են սեփականության և մտավոր սեփականության իրավունքի բոլոր սուբյեկտներին՝ առանց որևէ խտրականության (ֆիզիկական անձինք, իրավաբանական անձինք, պետություն, համայնքներ): ՀՀ սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ բոլոր սեփականատերերի իրավունքները պաշտպանվում են հավասարապես:

Նմանապես, կարծում ենք, որ, ընդհանուր առմամբ, վերը նշված երեք պնդումները վերաբերում են սեփականության և մտավոր սեփականության իրավունքի բոլոր օբյեկտներին:

Միևնույն ժամանակ, օրենքով կարող են սահմանվել բացառություններ սեփականության (այդ թվում՝ մտավոր սեփականության) իրավունքի որոշակի սուբյեկտների և օբյեկտների համար: Օրինակ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 203-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի ազատորեն՝ առանց թույլտվության, գտնվելու պետության կամ համայնքի սեփականություն հանդիսացող՝ բոլորի համար բաց հողամասերում և օգտվելու դրանցում եղած բնական օբյեկտներից՝ պահպանելով օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված նորմերը: Սա նշանակում է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի ազատորեն՝ առանց որևէ թույլտվության, գաղտնի լուսանկարել և տեսանկարահանել պետության կամ համայնքի սեփականություն հանդիսացող բաց հողամասերը և դրանցում եղած բնական օբյեկտները՝ այդ թվում նաև օգուտ ստանալու նպատակով կամ ակնկալիքով: Հարկ է նշել, որ բաց հողամասերը և բնական օբյեկտներն ինքնին չեն կարող հանդիսանալ մտավոր սեփականության իրավունքի օբյեկտներ:

Հետաքրքրական է նաև այն հարցադրումը, թե արդյոք սեփականատերը կարող է իրեն պատկանող տարածքում գտնվողների համար սահմանել պարտադիր պահպանման ենթակա որոշակի կանոններ, որը կներառի սեփականության տարածքում տեսանկարահանման կամ լուսանկարման արգելք:

Այս հարցի պատասխանը կարևոր է այնքանով, որ եթե սեփականատերը նման իրավագործություն ունի, ապա այդպիսի արգելքի առկայության պայմաններում կատարված գաղտնի լուսանկարումը կամ տեսանկարահանումն ինքնին կխախտի այդ տարածքի սեփականատիրոջ սեփականության իրավունքը՝ անկախ այն հանգամանքից՝ լուսանկարումը կամ տեսանկարահանումը կդիտվե՞ն որպես «գույքի օգտագործում», թե՞ ոչ:

Կարծում ենք, որ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող տարածքում գտնվողների համար սահմանել պարտադիր պահպանման ենթակա որոշակի կանոններ, որը կներառի սեփականության տարածքում տեսանկարահանման կամ լուսանկարման արգելք:

Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ իր հայեցողությամբ կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն: Կարծում ենք, որ սեփականատիրոջ կողմից նման կանոնների սահմանումը լիովին տեղավորվում է

«օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն» հասկացության ներքո (եթե, իհարկե, օրենքը որոշակի դեպքերի համար չարգելի նման կանոնների սահմանումը):

Ավելին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 203-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր սեփականատեր ունի իր հողամասը, շենքը, շինությունը և այլ անշարժ գույքի տարածքը այլոց մուտք գործելուց զերծ պահելու իրավունք: Ոչ ոք իրավունք չունի առանց օրենքով սահմանված հիմքերի կամ օրինական տիրապետողի թույլտվության մուտք գործելու հողամաս, շենք, շինություն և այլ անշարժ գույքի տարածք (ներխուժում): Ընդ որում, ներխուժում է համարվում նաև սեփականատիրոջ թույլտվությամբ հողամաս, շենք, շինություն կամ այլ անշարժ գույքի տարածք մուտք գործած անձի կողմից հողամասից, շենքից, շինությունից կամ այլ անշարժ գույքի տարածքից դուրս գալու վերաբերյալ դրանց սեփականատիրոջ պահանջը չկատարելը:

Հետևաբար, որևէ սեփականության տարածքում տեղադրված «լուսանկարելն արգելվում է» կամ «տեսանկարահանելն արգելվում է» կամ նմանատիպ այլ նշանը (զգուշացումը) պետք է մեկնաբանվի հետևյալ կերպ.

1) սեփականատերը արգելում է իր տարածք մուտք գործել ցանկացած անձի, որը ցանկանում է առանց սեփականատիրոջ թույլտվության տարածքում լուսանկարում և/կամ տեսանկարահանում կատարել,

2) տարածք մուտք գործած անձը առանց սեփականատիրոջ թույլտվության տարածքում լուսանկարում կամ տեսանկարահանում կատարելու պահից համարվում է ներխուժող,

3) առանց սեփականատիրոջ թույլտվության տարածքում լուսանկարում կամ տեսանկարահանում կատարողին տարածքի սեփականատերը պահանջում է անհապաղ դուրս գալ տարածքից,

4) առանց սեփականատիրոջ թույլտվության տարածքում լուսանկարում կամ տեսանկարահանում կատարողի համար սեփականատերը անհապաղ վերացնում է, «հետ է կանչում» իր կողմից նախկինում որևէ եղանակով (այդ թվում՝ կոնկյուրենտ գործողություններով կամ լուռ համաձայնությամբ) տրված՝ տարածք մուտք գործելու թույլտվությունը:

Ընդ որում, եթե վերը նշվածը բացարձակ իրավունք է ֆիզիկական և իրավաբանական անձանց համար, ապա նույնը չի կարելի ասել տարածքի սեփականատեր հանդիսացող պետության և համայնքի մասին:

ՀՀ Սահմանադրության 184-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ համայնքի ավագանին օրենքով սահմանված կարգով տնօրինում է համայնքի սեփականությունը:

ՀՀ հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ համայնքի սեփականության ներքո գտնվող հողերը կառավարում և տնօրինում են համայնքի ղեկավարն ու ավագանին՝ Քաղաքացիական օրենսգրքով, սույն օրենսգրքով, այլ օրենքներով ու նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով:

ՀՀ Սահմանադրության 154-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կառավարությունը կառավարում է պետական սեփականությունը:

Հետևաբար, եթե ֆիզիկական և իրավաբանական անձանց պատկանող տարածքների դեպքում տարածքից օգտվելու (տարածքում գտնվելու) կանոնների սահմանումը կարող է տեղի ունենալ ցանկացած եղանակով, որը թույլ է տալիս բացահայտել սեփականատիրոջ կամքը (այդ թվում՝ նշանների տեղադրում և այլն), ապա

պետությանը և համայնքին պատկանող տարածքների դեպքում սեփականատիրոջ կանքը կարող է բացահայտվել, և նման կանոնները կարող են սահմանվել բացառապես իրավասու մարմնի ընդունած ակտով (որի իրավաչափությունը, ի դեպ, կարող է վիճարկվել):

Ասվածի օրինակ է ՀՀ տրանսպորտի նախարարության N 69/116-0006 հրամանը՝ «Մետրոպոլիտենից օգտվելու կանոնները հաստատելու մասին»¹, որի 11.8.-րդ կետի համաձայն՝ Մետրոպոլիտենում չի թույլատրվում նկարահանումներ կատարել առանց մետրոպոլիտենի տնօրենության թույլտվության:

Սակայն պետք է նշել, որ սեփականության տարածքում առանց սեփականատիրոջ թույլտվության լուսանկարման կամ տեսանկարահանման արգելք սահմանելու իրավունքը անգամ ֆիզիկական և իրավաբանական անձանց պատկանող տարածքների դեպքում չպետք է բացարձակ բնույթ կրի:

Մեր կարծիքով, նման արգելքներ չպետք է սահմանվեն որոշակի հանրային վայրերում (անկախ դրանց պատկանելիությունից), որոնք մշտապես կամ օրվա որոշակի ժամերին բաց են անորոշ թվով այցելուների համար:

Օրինակ, խիստ վիճելի է «Կասկադ» համալիրի սեփականատիրոջ կողմից համալիրի բաց տարածքում նման բացարձակ արգելք սահմանելը²: Դա կարող է տրամաբանական լինել բացառապես համալիրի տարածքում գտնվող մտավոր սեփականության օբյեկտները ապօրինի վերարտադրումից պաշտպանելու տեսանկյունից:

Ավելին, վիճելի է այն հարցը, թե արդյոք խանութների և սուպերմարկետների սեփականատերերը պետք է իրավունք ունենան նման կանոններ սահմանել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ խանութի կամ սուպերմարկետի տարածքում գաղտնի լուսանկարում կամ տեսանկարահանում կատարելը հանդիսանում է սպառողների իրավունքների պաշտպանության կարևորագույն գործիք:

Լյուսիսով գտնում ենք, որ քաղաքացիական դատավարության ընթացքում որպես ապացույց ներկայացված գաղտնի եղանակով կատարված լուսանկարի կամ տեսագրության թույլատրելիությունը պարզելիս, ի թիվս այլ հարցերի, հարկ է պատասխանել նաև այն հարցին, թե արդյոք նման լուսանկարի կամ տեսագրության կատարումը խախտել է որևէ անձի սեփականության իրավունքը՝ հիմք ընդունելով սույն աշխատանքում ներկայացված հարցադրումները և շեշտադրումները:

Ընդ որում, պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ «գաղտնի» եղանակով կատարված լուսանկարը և/կամ տեսագրությունը հաճախ հանդիսանում է անձի իրավունքների պաշտպանության միակ կամ առավել արդյունավետ միջոցը:

Մինևույն ժամանակ պետք է նաև հաշվի առնել, որ գաղտնի եղանակով կատարված լուսանկարը կամ տեսագրությունը, բացի սեփականության իրավունքից, կարող է խախտել նաև անձի այլ հիմնական իրավունքները (օրինակ՝ բնակարանի անձեռնմխելիության իրավունքը, մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը և այլն) և այդ հիմքով դատարանի կողմից ձանաչվել որպես անթույլատրելի:

¹ Ընդունվել է 19.05.1997թ., ուժի մեջ է մտել 10.01.1998թ.: Տե՛ս ՀՀԳՏ 1997.12.31/6 ՀՀԳՏ 1998.03.06/3(9):

² Տե՛ս, օրինակ, «Թե ինչու է «Կասկադում» արգելվում նկարվել. պարզաբանում», <http://www.slaq.am/arm/news/240709/>, 08.05.2018թ.:

ПРОБЛЕМЫ СООТНОШЕНИЯ ЗАЩИТЫ ПРАВА НА СОБСТВЕННОСТЬ И ДОПУСТИМОСТИ ФОТОГРАФИЙ, ВИДЕОЗАПИСЕЙ, ПРОИЗВЕДЕННЫХ СЕКРЕТНЫМ СПОСОБОМ, В ГРАЖДАНСКОМ ПРОЦЕССЕ

Ваагн Григорян

*Ассистент кафедры гражданского процесса ЕГУ,
кандидат юридических наук*

В данной статье автор обсуждает проблемные вопросы, связанные с допустимостью одних из самых проблематичных типов доказательств - фотографий и видеозаписей, произведенных секретным способом.

В настоящее время на практике возникли многочисленные споры по поводу того вопроса, может ли фотография или видеозапись считаться допустимым доказательством, если они были сделаны секретным способом. Для того, чтобы найти ответ на этот вопрос, в статье автором обсуждаются следующие вопросы: 1) Может ли фотография или видеозапись, сделанная секретным способом, нарушить право лица на собственность, и если да, то в каких случаях? 2) Считается ли фотогравирование или видеозапись имущества использованием имущества и нужно ли для этого согласие владельца? 3) Может ли владелец недвижимого имущества запретить фотографирование или видеозапись в пределах своего недвижимого имущества?

ISSUES OF CORRELATION OF PROTECTION OF RIGHT TO PROPERTY AND ADMISSIBILITY OF SECRET PHOTOS AND VIDEO RECORDINGS IN CIVIL PROCEDURE

Vahagn Grigoryan

*Assistant at the YSU Chair of Civic Procedure,
Candidate of Legal Sciences*

In the article the author discusses the problem issues associated with the admissibility of some of the most problematic types of evidence: secret photos and video recordings.

Currently, in practice there are numerous disputes over the issue of whether photos and video recordings can be considered as admissible evidence if the photo or video recording was made secretly. To find an answer to this issue, the following questions are discussed in the article: 1) Can secret photos and video recordings be considered as a violation of the right to property, and if yes, in which cases? 2) Can photographing or video recording of the property be considered as a form of usage of

that property and is the permission of the owner necessary for doing so? 3) Does the owner of an immovable property have right to prohibit photographing or video recording within the space of his/her immovable property?

Բանալի բառեր - գաղտնի լուսանկար, գաղտնի տեսագրություն, ապացույցների թույլատրելիություն, ապացույցի օգտագործման արգելք, սեփականության իրավունք, գույքի օգտագործում, անշարժ գույքի տարածքում լուսանկարման արգելք, անշարժ գույքի տարածքում տեսագրության արգելք

Ключевые слова - секретная фотография, секретная видеозапись, допустимость доказательств, запрет на использование доказательства, право на собственность, использование имущества, запрет фотографирования в пределах недвижимого имущества, запрет видеозаписи в пределах недвижимого имущества

Key words - secret photo, secret video recording, admissability of evidence, prohibition on usage of evidence, right to property, usage of property, prohibition of photographing within the space of immovable property, prohibition of video recording within the space of immovable property